

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ

մարտի 2025 թվականի N —— Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի «Ընտանիքի անապահովության գնահատման կարգը, պայմանները, տվյալների ու դրանք տրամադրող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ցանկը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից տվյալներն ստանալու և տրամադրելու, անապահովության նպաստի և հրատապ օգնության նշանակման, վճարման և ավելի վճարված գումարները վերադարձնելու ժամանակացույցը կազմելու կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 2025 թվականի անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը, անապահովության նպաստի և հրատապ օգնության չափերը, անապահովության նպաստի նվազագույն չափը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն, 2014 թվականի ապրիլի 23-ի N 495-Ն, 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն, 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն, 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն, 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 1784-Ն, 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն, 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն, 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1105-Ն, 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն, 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984-Ն, 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1711-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն, 2015 թվականի

սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 27-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 19-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին,» բառերը.

2) որոշման N 1 հավելվածի 39-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) վարկային պարտավորությունների գծով ամսական մարման չափն ընտանիքի մեկ հաշվարկային անդամի հաշվով սահմանային շեմի արժեքը գերազանցելու հանգամանքը: Ընդ որում՝ ամսական մարման չափը հաշվարկվում է կիրառելով տոկոսադրույքի վերագրումներ՝ վարկի մարման անուիտետային եղանակով՝ հետևյալ բանաձևով.

որտեղ՝

ա. R -ը վարկի ամսական մարման չափն է.

բ. P -ը վարկի մայր գումարի մնացորդի գումարն է.

գ. ո -ը վարկի ժամկետին մնացած ամբողջական ամիսների թիվը.

դ. ր -ը վարկի փաստացի տարեկան տոկոսադրույքի (հիփոթեքի կամ գյուղատնտեսական վարկի դեպքում կիրառվում է 13% տարեկան փաստացի տոկոսադրույքի, այլ վարկերի դեպքում՝ 20% տարեկան փաստացի տոկոսադրույքի) 1/12 մասն է:

Ամսական վճարումների չափի հաշվարկը կատարվում է մեկ միավորային ճշգրտությամբ և կլորացվում է մաթեմատիկական կանոններով. ».

3) որոշման N 3 հավելվածի՝

ա. 1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<

3) միգրացիայի և	բնակչության և	Հանրային	առցանց	առցանց	վեբ
քաղաքացիությ ան	պետական	ծառայություն ների	հարցման	հարցման	ծառայությա ն
ծառայություն մ	ռեգիստրու մ	համարանիշ, հանրային	համաձայ ն	օրը	միջոցով
	հաշվառվա ծ	ծառայություն ների			
	անձանց				

մասին	համարանիշ
տվյալը	չունենալու մասին
	տեղեկանքի համար
	կամ անձը
	հաստատող
	փաստաթղթի
	տվյալները (սերիան և համարը), հաշվառման հասցեն

».

բ. 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

15. ԱՔՌԱ Քրեդիտ վարկային պար Հանրային ծառ առցանց առցանց առցանց`
Ռեփորթինգ (համտավորության այությունների հարցման հարցման վեբ ծառա-
ածայնությամբ) մասին տվյալը, համարանիշ, համաձայ օրը ւթյան
և միջոցով
հանրային
ծառայություննե
րի համարանիշ
չունենալու
մասին
տեղեկանքի
համար կամ
անձը
հաստատող
փաստաթղթի
տվյալները
(սերիան և
համարը)

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: